

ԴԱՍ 5. Փրկող հավատք

Ներածություն

Բանալի համարներ

- ՄԱՍ 5.1 Ինչ է փրկող հավատքը
- ՄԱՍ 5.2 Վերստին ծնվել հավատքով
- ՄԱՍ 5.3 Հավատքը Աստծո պարզեցն է
- ՄԱՍ 5.4 Հավատքն անհատական է
- ՄԱՍ 5.5 Հավատքն ընդունելու արգելքները
- ՄԱՍ 5.6 Կամրջի նկարագրում
- ՄԱՍ 5.7 Հավատքի հավաստիությունը
- ՄԱՍ 5.8 Նվիրման աղոթք
Ամփոփում
Աստվածաշնչյան ուսումնասիրություն
Աշակերտի անհատականությունը

**Նշումների
համար**

Ներածություն

Qորորդ դասում տեսանք, որ փրկությունը միայն հնարավոր է Հիսուսի արյան միջոցով: Ո՞րն է այդ փրկության կարևորությունը մեզ հաճար:

Փրկությունն աշանակում է, որ մենք հաշլովում ենք Աստծո հետ և խաղաղություն ունենք Նրա հետ Իր Խոսքին համանդվելու արդյունքում:

Փրկությունը հոմանիշ չէ հետևյալ իմաստներին.

- Գիտություն:
- Փիլիսոփայություն:
- Ապաշխարություն:
- Որոշում:
- Լավ մտադրություններ:

Իր անհնազանդության պատճառով մարդն ավելի է ներքաշվում մեղքի իշխանության մեջ: Սա պատճառ է դառնում Աստծո դեմ ապստամբության և Նրա Խոսքի հանդեպ անհնազանդության:

Հնարավոր է, որ մենք զիտակցենք, թե կա Աստված, և թե Հիսուսը մահացավ մեր մեղքերի հաճար մոտ 2000 տարի առաջ, նոյնիսկ, որ մեղավոր ենք և փրկության կարիք ունենք, քայլ միայն այս իմացությունը չի կարող փրկել մեզ: Հետևապես, ինչպես կարող ենք փրկություն ստանալ:

**Փրկվելու և Հիսուսի հերկելու համար կարիք ունենք
հավաքրի:**

Մենք կարիք ունենք զիտակցելու, որ մեղավոր ենք, որ Հիսուսը քափեց իր արյունը և մահացավ մեր մեղքերի հաճար: Մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերից և խնդրենք Աստծուն ներել մեզ: Հետո պետք է հանձնենք մեր կյանքը Հիսուսին և **հավաքրով՝
ընդունեան Նրան՝** որպես Տեր և Փրկիչ (Սարկ. 1:15, Հովհ. 1:12, Գ. Առ. 20:21): Ապաշխարությունը և հավատքը գնում են ձեռք ձեռքի: Նրանք կառաջնորդեն փրկագնակած, նոր և հավիտենական կյանքի. մի կյանք, որը պտուղ կրերի Աստծո փառքի հաճար:

Բանալի համարներ

*Նշումների
համար*

- | | |
|----------------|----------------|
| Հովհ. 3:16 | Հոռվմ. 10:9–13 |
| Նուկ. 13:23–25 | Եքր. 11:1–6 |
| Հոռվմ. 3:21–28 | Եքր. 4:2 |

ՄԱՍ 5.1 Ինչ է փրկող հավատքը

Փրկարտի հասլապրքն ունի հետևյալ տեսակետները.

- Հանձնել կյանքը Աստծուն (Սաղմ. 37:5):
- Հավատալ Հիսուսին (Հովհ. 3:15):
- Սրտով հնազանդ լինել (Հոռվմ. 6:17):
- Սրտում հավատալ (Հոռվմ. 10:9,10):
- Հավատալ, որ Աստվածաշունչը Աստծո Խոսքն է (Բ Տիմ. 3:16, 17):
- Ապավինել Աստծուն (Եքր. 2:13):
- Հրավիրել Հիսուսին՝ Իր տեղը գրավելու մեր կյանքում (Հայտ. 3:20):

Համաձայն Աստվածաշնչի՝ հավատքն ավելին է, քան զիտուրյունը, հույսը կամ փորձառությունը: **Հասլապրք մի խոր, ճերպին և բաշխիք է** առանց տեսնելու.

«**Հասլապրք հուսացած բաների հասլապրությունն է և չերևացող բաների ապացույցը»:**

(Եքր. 11:1)

**Նշումների
համար**

ՄԱՍ 5.2 ՎԵՐՍԱԴԻՆ ԾՆՎԵԼ ԻԱՎԱՏՔՆՎ

Կենդանի հավատքը միշտ ինչ-որ արդյունք է տալիս (Մարկոս 11:20-24): Որո՞նք են այն արդյունքները մեր կյանքում, եթե դառնում ենք Աստծուն և ընդունում Հիսուսին հավատքով՝ որպես Փրկիչ և Տեր:

«Ճշմարիկ, ճշմարիկ եմ ասում ձեզ, եթե մեկը վերսպիմ չժնվի, չի կարող Աստծո արքայությունը դիւնել... Ամեն նրան հավատացողը չի կորչի, այլ հավիպենական կյանք կունենա»: (Հովհ. 3:3, 16)

«Ուրեմն եթե մեկը Քրիստոսում է՝ նոր արևոդգած է հներն անցան և ամեն բան նոր է»: (Բ Կորն. 5:17):

«Եթ ինքը՝ խաղաղության Աստվածը ձեզ սովոր անի բոլորովին, և ձեր բոլոր հոգին և շունչը և մարմինը անարար պահիլ միևնույն մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալը»: (Ա Թես. 5:23)

Աստվածաշնչից պարզ է դառնում, որ մենք ավելին ենք, քան մարմինն ու շունչը: Մարմինը մեր ֆիզիկական մասն է: Մեր շունչը բաղկացած է մեր մտքից, կամքից և զգացմունքներից:


Վշշման Նին ասել է.

«Մեր զգացմունքները արտահայտում են, թե ինչպես ինք զգում, մեր միզրան ասում է այն, ինչ մտածում ենք, իսկ կամքը՝ այն, ինչ կամենում ենք»:

Բոլին Ուրբոնիարքը գրել է.

«Քանի դեռ մարդք ծնված չէ հոգուց, նոր շունչն է կառավարում իր կյանքը: Նա սովոր է գնահատել իրավիճակները իր մտքով և անել սեփական եզրակացությունները: Նա բավականաշափ ուշադրություն է դարձնում իր զգացմունքներին և հաճախ քոյլ է տալիս, որ դրանք կառավարեն իրեն: Նա կայացնում է իր սեփական որոշումները՝ հիմնված սեփական մտքի դատության կամ իր ունեցած ցանկությունների վրա, կամ էլ այդ երկուսի համատեղությամբ»:

Մինչ վերստին ծնվելը մենք նախևառաջ կառավարվում ենք զգայական օրգանների և մեր շնչի (մտքի, կամքի և զգացմունքների) կողմից: Աստծո գոյության մասին գիտակցելու և Աստծո հետ փոխհարաբերվելու ընդունակությունը մեր հոգու մեջ է, սակայն մարդկային բոլոր մտադրությունները և նպատակները այս առումով տադրուկալի են: (Եփես. 2:1–2)



Նշումների համար

Վերստին ծնվել նշանակում է ստանալ նոր կյանք հենց այն կոնկրետ մասում, որը մեռավ անկման արդյունքում: Աստծո հետ մեր փոխհարաբերությունը դառնում է կենդանի ու նոր, և մենք դառնում ենք Աստծո հոգևոր ընտանիքի անդամ: Ծառերը կարծում են, որ ապաշխարությունը նույնն է, ինչ վերստին ծնունդը, սակայն դա այլպես չէ:

*Ապաշխարությունը մեր պարասիսնակրվությունն է,
այնինչ վերստին ծնունդը՝ Աստծո գործը, որը սկսանում ենք հավատքի միջոցով:*

Միայն ապաշխարությունը չի վերափոխի մեր կյանքը, քայլ երբ կենդանանանք Սուրբ Հոգու միջոցով, մենք կսկսենք ապրել որպես վերստին ծնված մարդ և կհայտնաբերենք, որ դա իսկապես նշանակում է կենդանի լինել մարմնում, հոգում և շնչում (Գաղ. 5:16–25, Հոռվմ. 8:9–14, Հովհ. 3:3–8):

Հիսուսն ասում է, որ մենք չենք տեսնի Աստծո թագավորությունը՝ մինչև վերստին չծնվենք: Տեսնել Աստծո թագավորությունը նշանակում է փորձառարար ապրել Աստծո իրական լինելը, ճանաչել Նրա սերն ու ներունը և ապրել Աստծո գորության մեջ, քանի որ Նա էլ ապրում է մեր մեջ Իր Սուրբ Հոգով:

**Եշումների
համար**

ՄԱՍ 5.3

Հավատքը Աստծո պարզեն է

«Որովհենուն շնորհրով եք փրկված, հավապրի ձեռով, և սա ոչ թե ձեզանից, այլ Աստծո պարզեն է, ոչ թե գործերից, որ մենքը չպարծենա» (Եփես. 2:8–9):

Մենք ի ծնե Աստծուն դառնալու կարողություն չունենք: Մենք հավատի կարիք ունենք, որը Սուրբ Հոգու պարզեն է, Ով գործում է մեր մեջ և մդում մեզ դառնալ Աստծուն ապաշխարությամբ:

Երբ մենք արձագանքում ու լուս ենք Աստծուն, մեր կյանքի կյանքը բացվում է սպասնալու հավապրի այս մեծ պարզելը: (Հռովմ. 10:17)

Սա մեզ ի զորու է դարձնում ապավիճելու Աստծուն, մեր կյանքի իշխանությունը հանձնելու Հիսոս Քրիստոսին և ստանալու նոր հավիտենական կյանք Սուրբ Հոգու միջոցով:

ՄԱՍ 5.4

Հավատքն անհատական է

Այսպես կոչված շատ հավատացյալներ չգիտեն այս նոր կյանքի իրականության մասին: Չատերը դաստիարակվել են հավատացյալ ծնողների կողմից, հաճախել են եկեղեցի, սակայն ինչ–որ բաց թողնված բան կա: Ինչպե՞ս է այդ հնարավոր: Պատճառներից մեկն այն է, որ մարդիկ տարրերվում են իրենց հավատքի ընկալումով: Հավատքի տարրեր կատեզորիաները.

I) Պատմական հավատք

Դու գիտես, որ Աստված գոյություն ունի, և որ Հիսուսը մահացել է խաչի վրա, և մեռներից հարություն առել, և երկինք համբարձվել: Դու կրթվել ես այս ամենի մեջ՝ ամեն շաբաթ լսելով այն ամբիոնից հնչող քարոզներում: Աղորում ես և վախենում Աստծոց, բայց... ինչ–որ բան պակաս է, ինչպես Նիկողեանոսի մոտ Հովի. Յ–ում: Դու վստահ չես, որ վերատին ծնված ես և հավիտենական կյանք ունես, հույս ունես, բայց ոչ հաստատ:

II) Անհատական հավատք

*Նշումների
համար*

Ոչ միայն գիտես, որ Աստված գոյություն ունի, այլ ինչ—որ բան է ծնվել քո կյանքում, որովհետև ճանաչել ես Աստծուն անձնապես: Աստված այլևս հեռու չէ, և Նա քո սիրող Հայրն է: Քրիստոսը քո անձնական Տերն ու Փրկիչն է: Դու ստացել ես նոր կյանք՝ Սուրբ Հոգու զորության միջոցով: Հավիտենական կյանքը արդեն հաստատ է քեզ համար: Հույսը չի նշանակում հնարավոր է լինի, այլ վագահ՝ կլիմի:

III) Դինամիկ հավատք

Ոչ միայն գիտես, որ փրկված ես, այլ, որ Աստված հոգ է տանում քո մասին, որ Նրա խոսումները հաստատ են, և Նրա հետ անկարելի ոչինչ չկա: Դու ստվորել ես վստահել Աստծուն քո ամենօրյա կյանքի յուրաքանչյուր ոլորտում (Հոռվմ. 8:31–39, Մատք. 6:25–34):

Աստծո քաջավորությունը դառնում է քո կյանքի նպատակը և հավատքով ստանում ես այն ամենը, ինչի կարիքը որ ունես ծառայության համար:

ՄԱՍ 5.5

Հավատքն ընդունելու արգելքները


Հավատքը Աստծո պարզեն է, սակայն կան որոշակի արգելքներ.

- Հպարտությունը (Հովի 5:44):
- Այլ ապահովություններ ստեղծելը (Մատք. 7:24–27):
- Փրկությունը վաստակելու նպատակով օրինապաշտորեն ապրելը (Գալ. 3:10):
- Վախը՝ ամրողապես նվիրվելուց (Ա Հովի. 4:17):
- Հավատքի գիտություն ունենալը, բայց սրտով չհավատալը (Բ Կորնք. 13:5):
- Կեղծ ուսուցումը, որ դու չես կարող ընդունել Քրիստոսին (Բ Պետ. 2:1):
- Հավատքը հիմարություն համարելը (Ա Կորնք. 1:18):
- Ապացույցներ կամ նշաններ փնտրելը (Ա Կորնք. 1:22):


Նշումների
համար

ՄԱՍ 5.6


Կամրջի նկարագրությունը



1. Մարդու խնդիրները – Բաժանում



2. Մարդու ջամբերը – Ամհաղողություն



3. Աստծո լուծումը – Խաչը



4. Մարդու պատասխանը –
Թրիստոսին ստանալ

ՄԱՍ 5.7

Յավատքի հավաստիությունը

Մենք ավելի շատ պեսք է վստահենք ճշմարտությանը, քանի մեր զգացունքներին: Այդ ճշմարտություններն են:

- **Ինչ է ասում Աստծո Խոսքը մեզ**
(Հովհ. 5:24, Եքք. 13:5, Հովհ. 6:37, Հոռվմ. 6:37, Հոռվմ. 8:38, 39, Տիտ. 1:2, Հովհ. 10:28–29):
- **Սուրբ Հոգու վկայությունը մեր մեջ**
(Հոռվմ. 8:14–16, Հովհ. 3:24):

ՄԱՍ 5.8 ՆՎԻՐՄԱՆ ԱՂՈՔԸ

**Նշումների
համար**

Եթե կամենում ես անհատական հավատը ձեռք բերել կամ քո կյանքը ամբողջությամբ Քրիստոսին հանձնել, արա՛ այս կամ էլ նման մեկ ուրիշ աղոքը: Այս աղոքը միայն օրինակ է: Կարևոր այն է, որ այն սրտանց և անկեղծ լինի: Շշմարիտ ապաշխատությունը և մեղքից հետդարձը անհրաժեշտ են: Եթե զիտես կոնկրետ մեղքեր, շեշտի՛ր դրանք խոստովանությամբ:

«Տե՛ր Աստված, ես զիտեմ, որ մեղանչել եմ մտքով,
Խոսքով և գործով: Խնդրում եմ, Տե՛ր, ների՛ր ինձ իմ
մեղքերի համար: Ես որոշում եմ հետ դառնալ այն բոլոր
բաներից, որոնք զիտեմ, որ սխալ են: Դու քո կյանքը
խաչի վրա տվեցիր ինձ համար, իսկ իիմա ես եմ իմ
կյանքը տալիս քեզ: Խնդրում եմ զաս իմ կյանքի մեջ՝
որպես Փրկիչ, և քո արյունով մաքրես ինձ իմ բոլոր
մեղքերից և որպես Տեր՝ վերցնես իմ կյանքի վերահսկո-
ղությունը: Խնդրում եմ եկ որպես ընկեր և եղի՛ր իմ կող-
քին: Ես ցանկանում եմ Սուրբ Հոգու գորությամբ
ծառայել և հետևել քեզ հնազանդությամբ իմ կյանքի
մնացած օրերում: Ուստի խնդրում եմ, լցրո՛ւ ինձ քո
Սուրբ Հոգու առատությամբ: Շնորհակալ եմ, Հայր, ինձ
սիրելու և լսելու համար: Հիսուսի անունով: ԱՄԵՆ...»:

Եթե աղոքեցիր անկեղծորեն և խնդրեցիր Հիսուս Քրիստոսին գալ
քո կյանքի մեջ, ապա Նա Իր Սուրբ Հոգու միջոցով իիմա եկել և
ապրում է քո սրտում: Սիզուցե որևէ զգացմունքային տարբե-
րություն չես զգում, սակայն պետք չէ վստահել զգացմունքներին:
Վստահի՛ր նրա խոստումներին:

*Քրիստոնյայի հավատքը խարսխվում է այն փաստի վրա,
որ Աստված հավատարիմ է, և Նրա Խոսքը՝ ճշմարիկ:*

Քո հավատքն ամրացնելու համար կարդա՛ հետևյալ սուրբգրային
համարները.

Հայտ. 3:20

Եքք. 11:5, 8, 9

Հովհ. 1:12,13, 6:37

Հովհ. 10:28.

Հոռվմ. 10:13

Ղուկ. 11:13

Նշումների
համար

Ամփոփում

1. Մեր փրկությունը հավատքով է, որն Աստծո պարզեն է: Մենք ստանում ենք հավատքը, եթե արձագանքում ու լուսն ենք Աստծուն և բացում մեր սիրտը այդ պարզեն ընդունելու համար:
2. Մենք հավատքով վերատին ծնվում ենք Քրիստոսում:
3. Եթե կամենում ես փրկված լինել և դառնալ Քրիստոսի աշակերտը, դու պետք է խոստովանես քո մեղավորությունը և ապաշխարելով խնդրես Աստծո ներումք քո մեղքերի համար: Խսկ հետո պետք է հանձնես քո կյանքը Հիսուսին՝ դավանելով Նրան որպես Տեր ու Փրկիչ:
4. Մեր հոգին վերակենդանանում է Սուրբ Հոգով: (Եփես. 1:13, 14)
5. Քրիստոսում մենք ունենք նոր և լիառատ կյանք (Հովի. 10:10, Ա Կորնթ. 5:17)
6. Մեր փրկությունն ու վերատին ծնունդը սկիզբն է մի ամբողջական նոր կյանքի՝ Սուրբ Հոգու զորությամբ:

ԱՍՏՎԱԾԱՂՆՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ Աշակերտի անհատականությունը

Նշումների
համար

«Եվ ինքը՝ խաղաղության Ասպրածք քող ծեզ սուրբ անե բռորության, և ծեր հոգին և շունչը և մարմինը անմարակ պահի մինչև մեր Տիր Հիսուս Քրիստոսի գալը»: (Ա Թես. 5:23)

Մենք բոլորս քաջատելյակ ենք այն փաստին, որ մեզանից յուրաքանչյուրը ավելին է, քան մարմինը: Իհարկե, մարմինը կարևոր է, քայլ մենք պետք է նաև ինքներս մեզ հարց տանք՝ ինչու ենք մտածում, զգում և գործում այնպես, ինչպես անում ենք:

Ըստ Ծննդ. 2:7-ի՝ Աստված շինեց մարդուն «Հողի փոշուց և կենդանության շունչ փչեց նրա ոնցերի մեջ, և մարդը կենդանի հոգի եղավ»: Մարդ արարածին Պողոսը Ա Թես. 5:23-ում նկարագրում է որպես **հոգի, շունչ և մարմին**: Հենց հասկանան՝ ինչպես են մեր անհատականության այս մասերը համագործակցում, կհայտնաբերենք, թե ինչպես կարող ենք մեր ողջ անձը դնել Հիսուսի իշխանության ներք:

Մարմին

Երկու բառեր են գործածվում Նոր Կտակարանում.

- **Սունա**, որը նշանակում է մեր ֆիզիկական, քնածին մարմինը՝ հինգ զգայարաններով, որոնցով մենք հաղորդակցվում ենք շրջապատող աշխարհի հետ: Այս մարմինը մեզ ապահովում է նաև եղակի, անհատական արտաքինով: (Դուկ. 11:34, Հոռվմ. 6:12, Բ Կորնք. 4:10, Գաղ. 6:17):
- **Մարրս**, որը թարգմանվում է միս՝ մարմնի միսը: Դա այն մասն է, որը տկարանում և վերջնական արդյունքում մահանում է: Նոր Կտակարանում այս բառը ունի ավելի շատ իմաստներ, քան ուղղակի ֆիզիկական մարմնի միսը: Այն կարող է մարդկությանը նկարագրելու մեկ այլ ձև լինել՝ սամրող մարմին: Այդ բառը օգտագործվում է նաև նկա-

**Եշումների
համար**

բագրելու մարդու մեղավոր բնույթունը: Հաճախ օգտագործվում է մեղքի, տկարության, բացասական իմաստով (Հոռվմ. 7:18, 25, Հոռվմ. 8:12, Ա Կորնթ. 1:26, Բ Կորնթ. 7:1, Գաղ. 5:19, Եփես. 2:3): **Մարքսիզմի** միշտ հակասում է հոգու ճանապարհին (Գաղ. 5:16–25):

Շունչ

Ընչի համար հունարեն բառը **փայուխիա** է: Նոր Կտակարանում այս բառը նաև **կյամք** իմաստով է կիրառվում (Մարկ. 8:36–37): Շունչ բառը վերաբերում է նաև մարդու անձին, երբեմն էլ նկատի է առնվտում *սիրոց*: Շունչը կամքի, մտքի և զգացմունքների նստավայրն է (Մատթ. 26:38):

Շնչի մտածելու, ընտրելու և զգացմունք արտահայտելու ընդունակությունը ապացույցն է նրա, որ այն ի սկզբանե Աստծոն պատկերով է ստեղծված: Շնչի այս երեք տարրերը՝ միտքը, կամքը և զգացմունքները կերտում են մարդու եղակի անհատականությունը:

Քոզի

Կոր Կտակարանը բացատրում է մարդու հոգևոր բնույթը: Մարդն ոնի հոգի, որը քրիստոնի մեջ կենդանանալու պահից սկսած ի վիճակի է դարձնում նրան հաղորդակցվել Աստծո Հոգու հետ առանց ֆիզիկական զգայարանների գործածության (Հոռվմ. 8:16): Աստվածաշունչն ասում է, որ Աստված մարդուն իր պատկերով ստեղծեց (Ծննդ. 1:27): Աստված մարդուն իր պես բարյական արարեց: Եվ մեր հոգու տարրերից մեկը խիդճն է, որը զգացնել է տալիս մեզ բարին և չարը:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ.


- **Հոգիա** Աստծո նստավայրն է:
- **Շունչը** մեր իմքնագիտակցության տեղն է:
- **Մարքսիզմ** մեր աշխարհընկալման տեղն է:

Կատարյալ մարդը

Նշումների
համար

Եթք Աստված ստեղծեց մարդուն, Նա նրան կատարյալ ստեղծեց: Ներքևում կատարյալ մարդու դիագրամն է.

ԱՍՏՎԱԾ



ՍԱՏԱՆԱ

Մարդը ստեղծվեց Աստծո պատկերով՝ մարմնով, հոգով և շնչով: Մարմինը այն մասն է, որը հաղորդակցվում և գործում է այս աշխարհում: Շունչը կամքի, մտքի և զգացմունքների տեղին է: Հոգին ի վիճակի է դարձնում մարդուն անհատական փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ, Որը Հոգի է (Հովհ. 4:24):

Առաջին մարդը շուներ մեղավոր բնույթ, ուստի նրա շունչը ի գորու էր պարզ կերպով հաղորդակցվել Աստծո հետ: Աղամի փոխհարաբերությունը նրան ստեղծող Հոր հետ կատարյալ էր: Նրա շունչն ու մարմինը իր հոգու իշխանության ներքո էին, որին էլ առաջնորդում էր Աստծո Հոգին: Այս կերպ նրա կամքը, միտքը և զգացմունքները համապատասխան էին Աստծո կամքին, մտքին և զգացմունքներին: Նրա մարմինը (սարքսը) վերահսկողության ներքո չէր, բայց դրսնորում էր մարմնի և ներքին անձի մաքուր


Եղումների համար

ցանկություններն ու կարիքները: Օրինակ՝ քաղցր և ծարավը մարմնի նորմալ ցանկություններ են, բայց չկային այնպիսի ցանկություններ և կրքեր, որ դեկավարեին Աղամի ողջ կյանքը: Նրա մարմինը գործում էր պատշաճ ձևով և ի զորու էր կատարելու այն առաջադրանքը, որ Աստված էր տվել Աղամին (Ծննդ. 1:26–31):

Մարդը, որ Աստծո կողմից կատարյալ էր ստեղծված, ապրում էր մի կյանք, որը բնութագրվում էր ներդաշնակությամբ, խաղաղությամբ, սիրով, հնագանդությամբ և իշխանությամբ:

Բնածին մարդը

Ներքեսում բնածին մարդու գծապատկերն է.



Առաջին մարդը ստեղծված էր ազատ կամքով և պատասխանատվությամբ: Թեև Աղամը, Աստծո հետ սիրո փոխարարելության մեջ լինելով, ապահովված էր Աստծո առաջնորդությունը և պաշտպանությունն ունենալու, սակայն ազատ էր այլ ընտրություն կատարելու:

**Նշումների
համար**

Եթք Ադամն ընտրեց հետևել Սատանայի խարկանքին և ապստամբեց Աստծո դեմ՝ մեղանչեց: Եվ քանի որ Աստված Սուրբ է, փոխհարաբերությունը Աստծո Հոգու հետ խզվեց: Մարդը հոգևորապես մեռավ: Եվ քանի որ նա այլս ընդունակ չէր առաջնորդվել Աստծո Հոգուց, նրա «ես»-ը՝ միտքը և ցանկությունները, գլուխ բարձրացրին: Մարդը և՛ իր ներսում, և՛ իր շրջապատում բացվեց ամեն տեսակ սխալ ազդեցությունների առջև:

Ադամի այդ ընտրությունը շատ սոսկալի հետևանք ունեցավ: Ադամի մեղքով յուրաքանչյուր մարդ ծնվում է մեղավոր բնությամբ, և մարմինը պատճառ է դառնում ողջ մարդու այլասերման (Եփես. 2:1-3): Մարդու մտքերը չարի ազդեցության ներքո են: Նրան դեկավարում են իր զգացմունքները, իսկ կամքի ուժը բույլ է: Նույնիսկ այն մարդիկ, ովքեր ունեն մեծ կամքի ուժ և աճուր սկզբունքներ, ընդունակ չեն մերժել մարմնի գործերը: Առանց Աստծո Հոգու առաջնորդության մարդն անկարող է տարբերել, թե որն է իրոք ճիշտը, և դրա հիման վրա գործել: Աստվածաշունչն ասում է, որ սիրու խորսամանկ է ամենից շատը: Զկա ոչինչ, որից ինքներս մեր մեջ կառչենք: Եվ ինչքան էլ զանք գործադրենք, չենք կարող հաճեցնել Աստծուն (Հոռվմ. 8:8): Եվ վատագույն դեպքում մենք կարող ենք բաց լինել ցանկացած սխալ հոգևոր և սատանայական ազդեցությունների առջև:

Վերստին ծնված մարդը

Աստված գիտեր Ադամի անհնազանդության սոսկալի հետևանքները: Աստված Իր սիրով և ողորմությամբ միջոց գտավ մեղքի դեմ Իր բարկությունը պարպելու և մարդուն Իր մոտ քերելու, թեև մարդկային արարքների համար Նա արդարացի կլիներ այդ ամենը չանել: Այդ ճանապարհը Հիսուսն էր: Խաչի վրա Հիսուսը ոչնչացրեց մեղքի պարտքը և ազատ արձակեց մարդուն՝ այլս Սատանայի իշխանության ներքո չլինելու և Աստծուն հետևելու:

Սա Հիսուս Քրիստոսի Ավետարանի գորությունն է: Մարդու հոգին պետք է վերստին ծնվի, որից հետո շունչը ի վիճակի կլինի Աստծո հետ միության մեջ ապրելու: Աստծո Հոգին համովանում է մարդուն մեղքի համար և պարզ դարձնում, որ միայն Հիսուս Քրիստոսը կարող է փրկել նրան և տալ հավիտենական կյանք: Այս համովանության պատճառով էլ մարդը բաց է անում իր


*Նշումների
համար*

սիրտը և վերստին ծնվում Սուրբ Հոգու գորությամբ: Հիմա նա աստվածային քննության մեջ է, և Աստծո հետ նրա փոխարարականությունը վերականգնված է (Թ Պետ. 1:3–4):

Ակնհայտ է նաև Պողոսի նամակից, որ վերստին ծնված մարդը միանգամից կատարյալ չի լինում, ինչպիսին առաջին մարդն էր: Վերստին ծնվելուց հետո հավատացյալը պետք է աճի՝ մարմնավոր քրիստոնյայից դառնալով հոգևոր քրիստոնյա (Ա Կորնք. 3:1–3):

I) Մարմնավոր քրիստոնյա

Ներքեւում գծապատկերը ցույց է տալիս մարմնավոր քրիստոնյային:



Եթե վերստին ծնվում ենք, մեր հոգին կենդանանում է Քրիստոսի մեջ և նորոգվում, քայլ մեր մարմինն ու շունչը դեռ կարիք ունեն փոխվելու: Շունչը ամրողությամբ ազդում է, մեր մարդկային էության վրա: Հիմա իշխանությունը փոխվել է, և մենք ի վիճակի ենք հոգու ճիշտ ազդեցություն ստանալ և մասնակցել այդ նորոգման գործին: Մեր հին մարդը փոխվ-


փում է այնքանով, որքանով մենք համագործակցում ենք Սուրբ Հոգու հետ: Մարմինը մեր հին կյանքի և Սուրբ Հոգով մեր մեջ եղած նոր կյանքի միջև պատերազմի դաշտն է: Մարմնավոր քրիստոնյան մեջն է, ով վերստին ծնվել է, բայց դեռ բույլ է տալիս, որ իր հին, մեղավոր բնույթը առաջնորդի իրեն, որը և հակամարտության պատճառ է դառնում: Կասկած չկա, որ դու փորձառարար ապրել ես այս հակամարտությունը:

**Նշումների
համար**

Քանի դեռ բույլ չես տվել Քրիստոսին շարունակարար քո կյանքի վրա տարածել իր Տեր լինելը, դու կմնաս մարմնավոր քրիստոնյա: Եվ քանի դեռ Սուրբ Հոգին չի գործադրել իր իշխանությունը քո քրիստոնեական կյանքում, դու պայքարի մեջ կլինես, որովհետև կփորձես հաղթություն ձեռք բերել անձնական ջանքերով, որն ուղղակի հնարավոր չէ: Բնածին մարդը չի կարող հաղթահարել իր հին բնույթյունը և միշտ ապրում է պարտության մեջ:

II) Հոգենոր քրիստոնյա

Ներքեսում հոգենոր քրիստոնյայի գծապատկերն է.



**Եշումների
համար**

Աստված ուղարկեց Իր Որդուն՝ մեզ փրկելու և ազատագրելու (Մատք. 1:21, Կող. 1:13,14)

Ա Հովի. 3:8): Նա ուղարկեց Իր Սուրբ Հոգուն՝ մեզ մեղքի համար հանդիմանելու, որպեսզի դառնամք Աստծուն մեր ողջ սրտով, Հիսուսին մեր կյանքերի Տեր ընդունենք և խնդրենք Նրան մեզ Սուրբ Հոգով լցնել (Հովի. 7:38, Գ. Առ. 2:38): Սևնը պետք է բացենք մեր կյանքն ամբողջությամբ, որ Սուրբ Հոգին զործի մեր մեջ:

Մարմնավոր և հոգևոր քրիստոնյաների միջև տարբերությունը ակնհայտ է՝ հոգևոր քրիստոնյային առաջնորդում է Սուրբ Հոգին և ոչ թե իր մեղավոր անձի հետարրբությունը (Գաղ.5:16):

Քրիստոսն իր աշակերտներին հաղթանակ խստացավ աշխարհի, մարմնի և Սատանայի նկատմամբ (Ա Հովի. 5:4, 2:15–17, 3:8–9): Ուստի կարևոր է մեզ համար հայտնաբերել **Ասպժուց
դրված այդ հաղորդանակը** մեր ամենօրյա կյանքում: Սա կարող ենք անել միայն այն ժամանակ, եթե հնազանդեցնենք մեր կյանքը Հիսուսին:

Եթե դու պատրաստ ես հետևել Հիսուսին, ապա խաչի վրա Նրա մահվան և հարության շնորհիվ ձեռք բերված հաղթական կյանքը քոնք կլինի: Այս հաղթանակը մեր ձեռք բերածը չէ, այլ Քրիստոսինը, որն ընդունում ենք հավատքի միջոցով: Եվ դու Պողոսի հետ միասին կարող ես ասել հետևյալը.

«Ես կենդանի եմ, ոչ թե այլիս եմ, այլ Քրիստոս է կեն-
դանի ինձանում: Եվ ինչ—որ հիմա կենդանի եմ մարմ-
նով, **Ասպժուց Որդու հավապրություն կենդանի,** ով սի-
րեց ինձ և իր կյանքը դպից ինձ համար»: (Գաղ. 2:20)

Հոգևոր քրիստոնյան չի ապրում իր սեփական ուժերով, նա ապրում է շնորհրով: Նա հաղթանակ չի տանում իր սեփական ուժերով, այլ բացում է իրեն Քրիստոսի մեջ Աստծո փառքի առջև: Այս ձեռվ իր մեղավոր բնույթը Սուրբ Հոգու զորությամբ մեռնում է, և նա ստանում է նոր կյանք:

«Ես աղորում եմ, որ իր փառքի հարստությամ պես
դա ձեզ, որ զորությամբ հասկապվեր իր Հոգու
ձևովը նկատ մարդումը, որ Քրիստոս հավապրութ-
յունութիւնի ձեր սրբերում»: (Եփես. 3:16–17)

«Բայց եթե հոգով մարմնի զործերը սպաներ,
կապուեր»: (Հոռվմ. 8:13 թ)

Ով ես դու

**Նշումների
համապ**

Հիմա նայի՞ր քո կյանքին: Արդյո՞ք բնածին մարդ ես, որի հոգին մեռած է: Արդյո՞ք կառավարվում ես բնածին զգայարաններով և մարմնական ցանկություններով: Նման կյանքը առաջնորդում է մեղքի և մահվան: Ապաշխարությամբ և նվիրման աղոքքով քո հոգին կկենդանանա Սուրբ Հոգու միջոցով:

Արդյո՞ք դու մարմնավոր քրիստոնյա ես. մարդ, որը թեև մի անգամ հրավիրել է Քրիստոսին իր կյանքի մեջ, բայց և այս դեպքում դեկավարվում է մարմնական ցանկություններով: Արդյոք քո *եսը* դեռ գահի՞ն է :

Արդյո՞ք դու հոգևոր քրիստոնյա ես: Սա չի նշանակում, որ դու արդեն կատարյալ հավատացյալ ես, այլ որ քո հին անձը մեռած ես համարում Քրիստոսի հետ և ցանկանում ես առաջնորդվել Սուրբ Հոգուց:

Հոգևոր քրիստոնյան ամեն օր մեղքնում է հին անձը և ակտիվորեն ձգուում Սուրբ Հոգու լեցումությանը: Երբ փորձության մեջ է ընկնում, Հիսուսի անունով դեմ է կանգնում Սատանային և խնդրում Սուրբ Հոգուն՝ գալու և լցնելու իր կյանքը բարձությամբ:

Ինչպես ապրել հաղթական կյանք

Մենք հաղթանակ չենք ստանում մեխանիկորեն: Այնքան, ինչքան ապրում ենք այս մարմնում, մենք պետք է պայքար մոլորդ, քանի որ մեր կարիքի համար հաղթության և շնորհքի խոստունք ունենք:

Հետևյալ կետերը կարևոր են.

- Խնդրի՛ր Աստծոն քեզ օգնել, որ **ցանկանաս** ամել ճիշտ քաներ (Փիլիպ. 2:13):
- Բացի՛ր քո **հոգին** Աստծո Հոգու առջև և խնդրի՛ր Նրան, որ լցնի քեզ (Եփես. 5:18, Ղուկ. 11:13):
- Դեմ կանգնիր **մարմնին** ցանկություններին և հավատա՛, որ քո հին *եսը* մեռել է Քրիստոսի հետ (Հոռվմ. 6:6, Գաղ. 2:20):

**Նշումների
համար**

- Նորոգի՞ն քո **միպր**՝ այն լցնելով Աստծո Խոսքով (Հռովմ. 12:2, Բ Տիմ. 3:16–17):
- Թույլ տուր Սուրբ Հոգին տիրի քո **սրբին**: Նա քո մեջ հոգու պտուղ կաճեցնի և կմաքրի քո **զգացմունքները** (Գաղ. 5:22–23):
- Հանձնիր քո **մարմինը** Աստծուն՝ որպես ճշմարտության զորդիք (Հռովմ. 6:12–13):
- **Սիրի՞ն քո Տեր Ասպոծուն** քո ամբողջ սրտով, քո ամբողջ հասկացողությամբ և քո ողջ զորությամբ (Մարկ. 12:30):

Ավելի մանրամասն կխսունիք հաջորդ բաժնում: